

տակահարմար օգտագործումը վերին աստիճանի կարևոր հանգամանք է:

6. Ուսումնական պահանջները բավարարումը: Քանի որ մասնագիտական, թարգմանական տիպի բառարանը հանդիսանում է գործնական ուսումնական ձեռնարկ, ապա նրանում պետք է պահպանվեն որոշ պահանջներ, որոնք ներկայացվում են բառարանագրական ուսումնական ձեռնարկներին: Այդ նպատակին կարելի է հասնել պահպանելով հետևյալ պայմանները.

ա) ոչ միայն տերմինաբանական զլխաբաներ, այլև բառահոգովածի տերմինակապակցությունների խիստ այբբենական կարգի դասավորում:

բ) տերմինաբանական զլխաբանների քերականական բնութագրության բառափոխական ձևերի նշանակում: Նույնը կատարել նաև բառարանի թարգմանական մասում համարժեքների վերաբերյալ.

գ) բառափոխության նշաններ, թվերի միջոցով նշանակումից հրաժարում հօգուտ կոնկրետ տառային նշանների.

դ) փոփոխական շեշտով լեզուները, օրինակ,

ռուսերենը որոշ դժվարություններ է ներկայացնում ոչ-ռուսների համար շեշտադրման տեսակետից: Հետևաբար շեշտի նշանակումը կօժանդակեր տերմինի ճիշտ յուրացմանն ու արտասանմանը:

7. Պարբերական վերանայում և համալրում: Գիտությունը զարգանում է, կատարելագործվում, որի հետևանքով առաջանում են տերմինների միջոցով արտահայտվող նոր հասկացություններ: Այդ նոր տերմինները անհրաժեշտ է սխտեմատիկաբար ու խնամքով հավաքել բառարանագրական մշակման ու արձանագրման համար: Մյուս կողմից նորակազմ տերմինները պետք է քննել տվյալ լեզվի նորմայի համապատասխան ռացիոնալացման ու միասնականացման պլանով, հայտնաբերելով գործածության նեղ ոլորտը, տարբերակելով նշանակությունը ու վերացնելով տարբերակները:

Ահա ընդհանուր առմամբ մասնագիտական տերմինաբանության բառարանագրական մշակման սկզբունքների մեր տեսակետը:

ՄԻԲԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՑ

ՏՆԵՏԱՅՊԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Մենք ամեն օր թերթերում փայլալուծ ենք «տեխնոլոգիական ժապավենից» արտահայտություններ: Բայց ի՞նչ բան է տեխնոլոգիա? Դա ավտոմատ կերպով շարող մեքենա է, որը միաժամանակ շարվածքը հաղորդում է տարաձայնության վրա:

Տեխնոլոգիայի լրիվ կոմպլեկտը բաղկացած է 5 առանձին ապարատներից.

ա) ժապավեն ծակող սարք: Սա շատ նման է գրամեքենայի: Գրաշարը այդ մեքենայի ստեղծների վրա անընդհատ շարվածք է կատարում, առանց միջանկյալ աշխատանքի: Տասնամատ աշխատանքի մեթոդով տեխնոլոգիա սովորական լինոտիպից զգալի չափով արագ է շարում: Ծակող սարքի վրա հնարավոր է կատարել ժամում 300 հարված կամ ժապավենի վրա բացել 54 հազար անցք:

բ) այդ ժապավենի ազդանշանների հաղորդիչ (տրանսմիտեր): Ծակողած ժապավենի ազդանշանները վերածելով էլեկտրոնային իմպուլսի, տրանսմիտերը ժապավենի բովանդակությունը հաղորդում է տարածության մեջ՝ լարային կամ ոչ լարային միջոցներով (Գերմանիայում օգտագործվում է պետական հեռագրական ցանցը), Հաղորդիչը հնարավորություն ունի մի կենտրոնական կայանից հաղորդելու մի քանի տեղ:

գ) ծակողած ժապավենի ազդանշանների ընդունիչ, որի միջոցով նախօրոք բացված բոլոր անցքերով կատարվում է էլեկտրական իմպուլսների ընդունումը և նրա փոխադրումը թղթի ժապավենի վրա:

դ) ստեղծների ավտոմատ նախագիծը: Կատարում է ընդունիչի ֆունկցիա: Նա միանում է շարող մեքենայի ստեղծաշարին և ժապավենի ազդանշանները հաղորդում է ավտոմատ շարվածք կատարող լինոտիպին:

ե) արագաշար մեքենան, որը ղեկավարվում է ծակողած ժապավենի ազդանշանով և միաժամանակ ձուլում է տառերը: Աշխատանքի ըսկըզբունքը նույնն է, ինչ լինոտիպինը:

Այս մեքենայի շնորհիվ է, որ երկրից-երկիր են հասնում թերթերի հաղորդագրությունները: Նույնիսկ ամբողջ թերթի բովանդակությունը: Այժմ էլեկտրոնային «լինոտիպ» գործարանն արտադրում է այդ տիպի մեքենա:

Շարվածքային տեխնիկան զնալով ավելի է կատարելագործվում: Էլեկտրոնիկայի ներդրումը ավտոմատ մեքենաների մեջ հնարավորություն է տալիս վայրկյանում շարելու 1000 նիշ կամ ժամում 60 հազար նիշ, որը սովորական լինոտիպի 7-ժամյա աշխատանքային նորման է, այն էլ՝ մաքսիմումը:

2. ԳՈՐՈՅԱՆ